

ԽԵԼԱՑԻ ԽՕՍՔԵՐ

ՈՒ ԶՈՒՄՐՃԱՎԱՐ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

ԼՇԱՀ Տարդ :

ԼՇԱՀ մարդ մը երազին մէջ տեսաւ
որ փառաւոր սեղան մը կուտար . և ը-
րած ծախքին մտնմտուքէն ու ցաւէն ար-
թըննալով՝ անանկ կիրք մը ունեցաւ
աս բանիս վրայ , որ երդումն ըրաւ թէ
ալ քուն չըլլայ , որպէս զի այսպիսի ե-
րազ մէյմ՝ ալ չտեսնէ :

Ուրիշ ագահի մըն ալ գանձը գողե-
րը վերցուցեր էին . ինքն ալ յուսահա-
տութենէն ինքզինքը խղդել որոշեց .
բայց ան աստիճանի ագահ էր , որ ծո-
վուն մէջը ուզեց խղդուիլ , որպէս զի
չուանի ծախք չընէ :

ԼՇԱՐԻՒԵԿ որհնաներէ Տը :

ՈՐՄՆԱՆԵՐԿ պատկերհան մը որ
ինքզինքը իր արուեստին մէջ կատա-
րեալ կը կարծէր , իր բարեկամներէն
մէկուն , “ Տանդ պատերը Ճերմըկցուր ,
ըսաւ , որպէս զի վրանին նկարեմ , ” :
Դարեկամը , “ Լիարծեմ աւելի լաւ կ'ըլ-
լայ , ըսաւ , որ առաջ նկարես ետքը Ճեր-
մըկցընեմ , ” :

Առաջ ու շահասէր բարեհամ :

ԱՌՈՒՏ բարեկամները Ճանճերու պէս
են , որ առտըւրնէ ինչուան իրիկուն խո-
հակերոցը կը կենան՝ քանի որ ուտե-
լու բան գտնուի , ետքը կը թողուն կ'եր-
թան :

ԽԵԼԱՑԻ առաջներ :

Չի թէ շատ ապրելով , այլ շատ տես-
ներով կը սորվուի :

Մարդն է հայելի մարդուն :

Վարդներդ բաց , որպէս զի ուրիշ-
ները չի բանան :

Ով որ շատ բանի ձեռք կը զարնէ ,
քիչը կը լըմբնցընէ :

Հեղգութիւնը վիշտերու մայր է :

Դարի ըրէ և զանիկա ծով ձգէ . թէ
որ ձկները չի գիտնան , Լատուած կը
գիտնայ :

Դանակին ըրած վէրքերը կը բժշ-
կուին , լեզուով եղածները ամենեին
չեն բժշկուիր :

Դմաստութիւնը տարիքին թույն
վրայ չէ , այլ գլխու մէջը :

Վշխարհիս ծովուն մէջը մեծամեծ
նաւերն ալ կ'ընկղմին , դուն ունեցած
խեղջնաւակովդ ինչ պիտի ըլլաս :

Վցէկ մշակէ քու այգիդ , ու ան ա-
տենը չես նախանձիր քովինիդ այգւոյն :

Տրտում մարդուն ուրախութիւննե-
րը քիչ կը տեսեն :

Վեծ բանի ձեռք զարնողին՝ մեծ
հոգ պէտք է :

Չես սիրուիր՝ թէ որ գքեզ միայն կը
սիրես :

Հաշտուած բարեկամութիւնը՝ ա-
ղէկ չգոցուած վէրքի նման է :

Վմենուն բարեկամը՝ մէկուն ալ բա-
րեկամչէ :

Տեղ մ'ալ չհամնիր ան մարդը որն որ
ամէն տեսած Ճամբան կը բռնէ :

Շոյլութիւն ու խաղ , թշուառու-
թեանց երկու մեծամեծ աղբիւրներն
են : Վու փորձերովդ աւելի լաւ կընաս
Ճանճնալ աս բանս քան թէ ուրիշի խօս-
քերովը :